ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/203

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյանի, Հ. Ղազարյանի, Գ. Գրիգորյանի, Ա. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18626-2019 գրությամբ «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 06.11.2019թ.-ի թիվ 01/61-23386 գրության հիման վրա, 12.11.2019թ.-ին «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 12.11.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 19.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 19.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.12.2019թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 06.11.2019թ. թիվ 01/61-23386 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 18.06.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության ստրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, որի վերջնաժամկետը լրացել է 01.08.2019 թվականին, սակայն Ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացրել են «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.11.2019թ.-ի գրությամբ դիմել է «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18626-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին և ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՅ-ԼՕ-2019/203 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

ՀՀ ֆինանսների նախարարության 12.11.2019թ-ի թիվ 26/26-1/18626-2019 գրության համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի 06,11.2019 թվականի թիվ 01/61-23386 գրությունը: Նշված գրության համաձայն մատնանշվել է որոշակի փաստական հանգամանքներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը, մասնավորապես՝ նույն գրությամբ նշվել է, որ Ընկերությունը չի կատարել Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ միջև 18.06.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» ծածկագրով գնման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սպանձնած պարտավորությունները (Տես՝ գրության 2-րդ պարբերություն) և Ընկերության կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունները խախտելու համար նույն գրությամբ նշված իրավական հիմնավորումներով պայմանավորված Պատվիրատուն միակողմանի հրաժարվել է պայմանագրից (Տես՝ գրության 7-րդ պարբերություն):

Անդրադառնալով դիրքորոշմանս փաստական և իրավական հիմնավորումներին նշեմ հետևյալը՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կապալառուի կողմից աշխատանքի արդյունքի հանձնումը և պատվիրատուի կողմից դրա

ընդունումը ձևակերպվում է երկու կողմերի ստորագրած ակտով: Ակտն ստորագրելուց կողմերից մեկի հրաժարվելու դեպքում ակտում նշվում է այդ մասին, և ակտն ստորագրում է մյուս կողմը: (...):

Նշված իրավական նորմի վերլուծությունից պետք է փաստել, որ կապալի պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների հանձնում-ընդունումը ձևակերպվում է երկկողմ ստորագրած ակտով, որը արտացոլում է պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումը, իսկ այն դեպքում, երբ պարտավորությունները պատշաճ չեն կատարվում պայմանագրի կողմ հանդիսացող անձը իրավունք ունի հրաժարվել ակտը ստորագրելոց, նույն ակտում իր առարկության մասին նշում կատարելով: Այսինքն պետք է փաստել, որ այն դեպքերում երբ աշխատանքների կատարման ակտը ստորագրված է երկկողմ, ապա պայմանագրային պարտավորությունները կատարված են պատշաճ՝ պայմանագրի դրույթներին համապատասխան:

Նշվածը համադրելով գործում առկա փաստաթղթերի հետ, մասնավորապես՝ Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊ ընկերության միջև 11.11.2019 թվականին կնքված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման №01 արձանագրության, №01 ակտի և 11.11.2019 թվականին դուրս գրված հաշիվ վավերագրի (սերիա Բ. համար 9034252677) հետ պետք է փաստել, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները «Թ.Ա.Հ.Գ ԳՐԻԳ» ՍՊ ընկերության կողմից կատարվե| են պատշաճ, որի մասին առկա է նաև Երևանի քաղաքապետարանի հավաստումը, ուստի այն մասով, թե՞ իբր Ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները անհիմն են, իսկ առկա Փաստաթղթերով հիմնավորվում է Ընկերության կողմից պարտավորությունների կատարումը:

Ինչ վերաբերվում է Երևանի քաղաքապետարանի կողմից Պայմանագրից միակողմանի հրաժարվելուն, նշեմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն օրենսգրքի 421-րդ հոդվածի համաձայն՝

Կապարման կետանց թույլ տված պարտապանը պարտատիրոջ առաջ պատասխանատվություն է կրում կետանցով պատճառված վնասների և կետանցի ժամանակ պատահաբար առաջացած կապարման անհնարինության հետևանքների համար:

2. Եթե պարտապանի կետանցի հետևանքով կատարումը պարտատիրոջ համար կորցրել է իր հետաքրքրությունը, ապա նա կարող է հրաժարվել կատարումն ընդունելուց և պահանջել հատուցելու վնասները:

3. (...):

Նույն օրենսգրքի 715-րդ հոդվածի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ կապալառուին վճարելով մինչև պայմանագիրը կատարելուց պատվիրատուի հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը կատարած աշխատանքին համարժեք գին, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով: Պատվիրատուն պարտավոր է նաև հատուցել կապալի պայմանագրի դադարմամբ կապալառուին պատճառված վնասները՝ ամբողջ աշխատանքի համար սահմանված և կատարված աշխատանքի համար վճարված մասի գների տարբերության չափով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիր: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) (...):

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 3.2 կետի համաձայն եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ եթե կատարած աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում

նշված ժամկետում էլեկրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է վերադարձվում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված միջոցներ:

Պայմանագրի 3.4 կետի համաձայն՝ եթե Պայմանագրի 3.2 կետում սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարած աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարած աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.05 տոկոսի չափով:

Պայմանագրի 5.4. կետի համաձայն՝ Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում է և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

Պայմանագրի 7.12 կետի համաձայն՝ Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակացությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

Կատարելով վերոհիշյալ իրավական նորմերի համակարգային վերլուծություն պետք է փաստել, որ Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագրի կատարումից, եթե Կատարողի կեսանցի հետևանքով կատարումը Պատվիրատուի համար կորցրել է իր հետաքրքրությունը՝ Կատարողին վճարելով մինչ այդ պահը կատարված աշխատանքի դիմաց, հաշվի առնելով նաև Կատարողի մերլքի առկայությունը: Իսկ այն դեպքերում, երբ աշխատանքների կատարումը Պատվիրատուի համար չի կորցրել իր հետաքրքրությունը, իսկ կողմերը ունեն բանակցությունների իրականացման հնարավորություն, որի արդյունքում ձեռք բերվող համաձայնությամբ շարունակելով պայմանագրային հարաբերությունները և ստանալով աշխատանքների արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետներից ուշ, սակայն պատշաճ վիճակում, կարող են աշխատանքների կատարումը արձանագրել համապատասխան ակտով, միևնույն ժամանակ կիրառելով

պայմանագրով նախատեսված փոյժեր և հաշվանցել այն պայմանագրի արժեքից փաստացի ուշացված աշխատանքի արդյունքի օրերի քանակին համապատասխան:

*Սույն դեպքում նշվածը համադրելով գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ անկախ այն հանգամանքից, որ Երևանի քաղաքապետարանը 30.10.2019 թվականի թիվ 01/61-22873 ծանուցմամբ նախաձեռնել է Պայմանագիրն ամբողջությամբ լուծելու մասին գործընթաց, որից հետո կողմերի միջև սկսվել բանակցություններ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից ըստ էության բանավոր պահանջվել է լրացուցիչ աշխատանքների կատարում, որը Կատարողը չի մերժել առանց լրացուցիչ վճարներ պահանջելու և կատարել է դրանք, ըստ էության ավելացնելով աշխատանքների ծավալը, որը և հանգեցրել է աշխատանքների կատարման համար պայմանագրով նախատեսված ժամկետների ուշացման: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նշված աշխատանքաների կատարման ուշացումը պայմանավորված է եղել աշխատանքի ծավալերի ավելացմամբ (հավելյալ աշխատանքներն են՝ հակահրդեհային և անվտանգության ազդանշանների համակարգերի նախագծեր, ՄԱԿ-ի ծրագրերի պահանջների համապատասխանեցման նպատակով մշակված այլ փաստաթղթեր, որոնք իրենց մեջ ներառում են շենքի արտաքին ջերմամեկուսացում, տանիքի ամբողջովին հիմնանորոգում և ջերմամեկուսացում, նկուղի ջերմամեկուսացում, ջեռուցման համակարգերի լրացում, շենքի ծածկի ուժեղացում և այլ կոնստրուկտիվ լուծումներ), և բացակայում է Կատարողի մեղքը, Երևանի քաղաքապետարանը ըստ էության իր վարքագծով ձեռնպահ է մնացել Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելուց և արդյունքում ընդունել է աշխատանքների կատարումը՝ 11.11.2019 թվականին կնքված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N*01 արձանագրության, N01 ակտի և 11.11.2019 թվականին դուրս գրված հաշիվ վավերագրի (սերիա Բ, համար 9034252677) փաստաթղթերի հիման վրա, այսինքն ակնհայտ է, որ Երևանի քաղաքապետարանի համար աշխատանքների կատարման ընդունումը չի կորցրել իր հետաքրքրությունը, անկախ պայմանագրով նախատեսված ժամկետները ուշացնելուց, ավելին աշխատանքների փաստացի արդյունքները ընդունե|ուց հետո հաշկանցկե) են՝ փաստացի ուշացված օրերին համապատասխան հաշվարկված փոյժերը, ըստ էության ընդունելով այդ օրերի նկատմամբ պայմանագրի կիրառելիությունը, որը բացառում է այն ամբողջությամբ լուծելու հանագմանքը: Նշեմ ավելին Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվեյ են պատշաճ որակով և ընդունվել Պատվիրատուի կողմից, ուստի պետք է փաստել, որ Պատվիրատուն գործել է բարեխիղճ և ի վնաս իրեն կատարված*

լրացուցիչ ծավալի աշխատանքների արդյունքում, ուշացնելով ժամկետները կրել է նաև տույժի տեսքով վնասներ, ավելին այս պահին էլ զտվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացում: Իսկ Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը Պայմանագրի կատարումը ընդունելուց հետո նոր միայն ենթադրյալ պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծված լինելու հանգամանքին, որը իր վարքագծով արդեն իսկ բացառել է, և հղում կատարելով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսելու նախաձեռնության մասով իրավաչափ չէ, չի բխում կողմերի միջև առկա Պայմանագրի գրույթներից և գործընկերային հարաբերությունների սկզբունքներից, և առնվազն անհասկանալի է:

Պայմանավորված վերոգրյալով խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:»:

4. <u>ՍՑ-LO-2019/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի միջև 18.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45-րդ (քառասունհինգ) օրացուցային օրը (01.08.2019թ.-ին):

www.gnumner.am համացանցային կայքում 06.11.2019թ. հրապարակված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի միջև 18.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի

կողմից 30.10.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի միջև 11.11.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման–ընդունման վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը (այսուհետ՝ թիվ 1 Արձանագրություն):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18626-2019 գրությամբ «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախա-հաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն

սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կլստարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի միջև 17.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45-րդ (քառասունհինգ) օրացուցային օրը (մինչև 01.08.2019թ.):

www.gnumner.am համացանցային կայքում 06.11.2019թ. հրապարակված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի միջև 17.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 30.10.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի միջև 11.11.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման–ընդունման վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն 30.10.2019թ.-ին հրաժարվելով Մասնակցի կողմից Պայմանագրի կատարումից, միակողմանիորեն լուծելով այն, միևնույն ժամանակ 11.11.2019թ.-ին թիվ 1 Արձանագրություն կնքելով և Պայմանագրի կատարման արդյունքը ստանալով (թեկուզ մասնակի) իր գործողություններով վկայել է, որ այնուամենայնիվ չի հրաժարվել Պայմանագրի կատարումը ընդունելուց:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ պայմանագիրը լուծված համարելու փաստն արձանագրելու համար, որպես կարևոր և էական նշանակություն ունեցող փաստ, պետք է Պատվիրատուի կողմից դրսևորվի այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են կատարողի կողմից պայմանագիրը կատարելուց միակողմանիորեն հրաժարվելուն՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի գործողությունները վկայում են պայմանագրային հարաբերությունների շարունակման, վերջինիս պայմանագրի կատարումից չհրաժարվելու մասին:

Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18626-2019 գրությամբ «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/203 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**